ՀՏԴ 941(479.25)
Հայոց պատմություն

Արարատ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱրՊՀ, պ.գ.թ., պրոֆեսոր, պատմության ամբիոն
E-mail: araratvardanyan54@mail.ru

«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ԹԲՀ) ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ[1]

«Թուֆենկյան» հիմնադրամը հիմնվել է 1988 թվականին Նյու-Յորքում՝ ամերիկահայ գործարար ու բարերար Ջեյմս Թուֆենկյանի կողմից: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել հայրենիքում՝ 1999թ. Երևանում հիմնադրվեց «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ:
Արցախին օգնելու նպատակով 2003թ. բացվում է «Թուֆենկյան» հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակը, որի միջոցով իրականացվում են ազատագրված տարածքների վերաբնակեցման, սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթամշակութային և այլ ծրագրեր:
Բանալի բառեր՝ *«Թուֆենկյան» հիմնադրամ, բարեգործություն, Արցախի Հանրապետություն, ազատագրված տարածքներ, սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթական, մշակութային ծրագրերի իրականացում:*

А. Варданян

СОДЕЙСТВИЕ БЛАГОТВОРИТЕЛЬНОГО ФОНДА “ТУФЕНКЯН” РАЗВИТИЮ ОСВОБОЖДЕННЫХ ЗЕМЕЛЬ РЕСПУБЛИКИ АРЦАХ

Фонд “Туфенкян” был основан в 1988году в Нью-Йорке, американским армянином бизнесменом и бенефициаром Джеймсом Туфенкяном. С целью осуществления благотворительных программ на родине в 1999 году в Ереване был основан офис фонда “Туфенкян”.
В 2003 г. для оказания помощи Арцаху открывается офис фонда “Туфенкян” в Степанакерте, при поддержке которого на освобожденных территориях осуществляются социально-экономические, здравоохранительные, культурно- образовательные и программы переселения.
Ключевые слова: *Фонд Туфенкяна, благотворительность, Республика Арцах, освобожденные территории, социально-экономические, медицинские, образовательные, культурные программы.*

[1] Հոդվածը տպագրվում է ԼՂՀ Կառավարության կողմից հաստատված Արցախի Գիտական կենտրոնում իրականացվող scs 16.10-005 գիտական թեմայի շրջանակներում:

A. Vardanyan

THE TUFENKIAN CHARITABLE FOUNDATION ASSISTANCE TO THE DEVELOPMENT OF THE LIBERATED LANDS OF THE REPUBLIC OF ARTSAKH

The Tufenkian Foundation was founded in 1988 in New York by James Tufenkian, an American Armenian businessman and beneficiary. In order to implement charitable programs in the homeland, the Tufenkian Foundation office was founded in Yerevan in 1999.

In 2003, in order to assist Artsakh the Tufenkian Foundation opened an office which supported the implementation of the socio-economic, health, cultural, educational and resettlement programs at the liberated territories.

Key words: *Tufenkian Foundation, charity, the Republic of Artsakh, liberated lands, implementation of socio-economic, health, educational, cultural programs.*

Հայկական երկու հանրապետությունների անկախացումից հետո տասնյակ սփյուռքահայ բարեգործական, մշակութային, հայրենակցական, եկեղեցական կազմակերպություններ և հիմնադրամներ, համագործակցելով ՀՀ և ԼՂՀ Կառավարությունների հետ, մեծապես օգնեցին հայաստանաբնակ հայրենակիցներին և արցախահայությանը՝ նպաստելով հայրենիքի սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և այլ բնագավառների զարգացմանը: Այդ գործում մեծ ավանդ ունի «Թուֆենկյան» հիմնադրամը:

«Թուֆենկյան» հիմնադրամը (անգլերեն՝ Tufenkyan Foundation) հիմնվել է 1988թվականին Նյու-Յորքում ամերիկյան գործարար և բարերար Ջեյմս Թուֆենկյանի կողմից: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել հայրենիքում՝ 1999թ. Երևանում հիմնադրվեց «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ:

Հիմնադրամի գլխավոր նպատակն է շենացնել և հզորացնել հայրենիքը, հիմնական խնդիրներն են՝ աջակցել խոցելի և մեկուսացված ընտանիքներին, նպաստել քաղաքացիական հասարակության վերականգնմանը և մշակութային ու հոգևոր վերածննդին, իրականացնել բնապահպանական ծրագրեր, օժանդակել Լեռնային Ղարաբաղի սահմանամերձ շրջանների զարգացմանը:[1] Հիմնադրամը ՀՀ-ում իրականացրել է մի քանի տասնյակ բարեգործական ծրագրեր:

Արցախին օգնելու նպատակով 2003թ. բացվում է «Թուֆենկյան» հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակը, որի միջոցով իրականացվում են վերաբնակեցման, սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթամշակութային և այլ բարեգործական ծրագրեր:

Վերաբնակեցման ծրագիրը ԼՂՀ-ում սկսել է կենսագործվել 1993թվականից, որը սկզբում կարգավորվում էր Հայաստանի Հանրապետության, իսկ հետագայում՝ ԼՂՀ կառավարության համապատասխան որոշումներով:[2] Վերաբնակեցումը համազգային ռազմավարական կարևորագույն խնդիր է: Մեծ ուշադրություն դարձնելով դրան՝ «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից մեծածավալ աշխատանքներ են կատարված Արցախի ազատագրված, սահմանամերձ

---

[1] «***Հայկական Սփյուռք***». տարեգիրք 2009, Երևան, 2010, էջ 134:

[2] ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-13, պ.մ. 65, թ.11:

շրջանների վերաբնակեցման ուղղությամբ, ստեղծվում են աշխատատեղեր՝ հայության արմատներն իր հողում ամրապնդելու համար: Հիմնադրամի տնօրեն Ջեյմս Թուֆենկյանի կարծիքով՝ «…վերաբնակեցման խնդիրն այսօր ոչ միայն ԼՂՀ իշխանությունների, այլ սփյուռքի բարեգործական կազմակերպությունների, Արցախի ճակատագրով մտահոգ համայն հայության մտահոգություններից մեկը պետք է դառնա: Չնայած մեր կառույցը նպաստում է նաև երկրում կրթամշակութային մի շարք ծրագրերի իրականացմանը, աջակցում է տաղանդավոր երեխաների զարգացմանը՝ ցուցաբերելով բարոյական և նյութական օժանդակություն, սակայն մեր առաջնահերթ խնդիրը մնում է վերաբնակեցման ռազմավարությունը»:[1]

Այդ ուղղությամբ կատարած առաջին խոշոր քայլերից մեկը Հադրութի շրջանի նորակառույց Առաջամուղ գյուղի հովանավորչական ծրագիրն է, որը համահունչ է ԼՂՀ իշխանությունների վարած քաղաքականությունը: Առաջամուղը հիմնադրվել է 2005թ. «Թուֆենկյան» հիմնադրամի հանգանակած միջոցներով: Գյուղում կառուցված տասնութ տուն բնակեցված է: Բնակիչների մի մասը փախստականներ են Ադրբեջանից, մի մասն այնտեղ է տեղափոխվել Հայաստանից, մյուս մասն էլ՝ Ղարաբաղի տարբեր բնակավայրերից, որոնց տները պատերազմի տարիներին ավերվել են: Նորակառույց տները հարմարավետ են: Յուրաքանչյուր առանձնատուն ունի երեք ննջասենյակ, ընդարձակ հյուրասենյակ, ինչպես նաև խոհանոց, բաղնիք և սանհանգույց: Լուծված է շուրջօրյա ջրամատակարարման հարցը: Բոլոր բնակիչներն էլ ունեն իրենց տնամերձ հողամասն ու այգին, օժանդակ տնտեսությունը, ապահովված են անասուններով, թռչուններով:[2] Գյուղն ապահովված է էլեկտրականությամբ: Կառուցվել է գյուղապետարանի շենք և բուժկետ: 2017-ին հիմնադրամը շահագործման է հանձնել վեց նոր բնակելի տուն:

Առաջամուղ գյուղը 2008 թվականին կազմավորվել է որպես առանձին համայնք՝ իր մեջ ներառելով Առաջամուղ և Արաքսավան բնակավայրերը: Արաքսավան գյուղը հիմնադրվել է 2014 թվականին: Առաջամուղ համայնքի կազմում ընդգրկվելը լայն հեռանկարներ է բացել նրա զարգացման համար: Հովիտը ձգվում է մոտ 110կմ՝ ներառելով Քաշաթաղի և Հադրութի հարավային թևերը: Արաքսավան բնակավայրի ռազմավարական նշանակության ծրագրերն Արցախի իշխանությունների կողմից սկսել են իրականություն դառնալ 2012 թվականից: Բնակավայր եկած մարդկանց բնակեցնելու նպատակով կառուցվել է 35 ժամանակավոր կացարան: Կառուցվել են 30կմ երկարությամբ, 10կվ բարձր լարման հզորության էլեկտրական գծեր, վերանորոգվել են 40կմ-ի հասնող ջրանցքներ, մելիորատիվ աշխատանքներ իրականացնելու ճանապարհով մաքրվել են 1000 հեկտարից ավելի վարելահողեր, ինչը հնարավորություն է տալիս մենատնտեսներին զբաղվելու ինչպես բանջարաբոստանային, այնպես էլ հացահատիկային մշակաբույսերի աճեցմամբ:[3] Մենատնտեսներին

---

[1] «***Հայաստանի Հանրապետություն***», 5 սեպտեմբերի, 2007, Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, էջ 95:

[2] «***Հայաստանի Հանրապետություն***», 5 սեպտեմբերի, 2007:

[3] «***Ազատ Արցախ***»,11 հունիսի 2016:

հնարավորություն է տրվել նաև զբաղվելու այգեգործությամբ և անասնապահությամբ:

Արցախի Հանրապետության իշխանությունների, «Թուֆենկյան» հիմնադրամի այս ծրագիրն ունի ռազմավարական կարևոր նշանակություն, որի նպատակն է ամրապնդել հանրապետության հարավային սահմանը և զարկ տալ գյուղատնտեսությանը: Սակայն նման ծրագրերը անհնարին է իրականացնել միայն Արցախի պետական բյուջեի միջոցներով: Անհրաժեշտ է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Սփյուռքի մեր հայրենակիցների աջակցությունը:

Վերաբնակեցման ծրագրի շրջանակներում 2008 թվականից ԹԲՀ-ի կողմից իրագործվում է Քաշաթաղի շրջանի վերաբնակիչների տների վերանորոգման համար շինանյութի տրամադրման և դրանց նպատակային օգտագործման վերահսկման ծրագիրը: 2008-2013թվականներին Քաշաթաղի շրջանի 7 համայնքների 47 ընտանիքների տրամադրվել է համապատասխան շինանյութեր:[1] Հերիկ և Հակ համայնքներում հիմնադրամի կողմից տուն է տրամադրվել երկու վերաբնակիչ ընտանիքների:[2] Երկու տուն տրվել է «Արցախի վիրավոր զինծառայողներին բնակարանային հարմարավետ պայմաններով ապահովելու» ծրագրի շրջանակներում: Հիմնանորոգվել է Աղավնատուն համայնքում ապրող բազմազավակ ընտանիքին հատկացրած տունը:[3] Առանց զարգացած ենթակառուցվածքների ու վերաբնակիչների համար տարրական կենսապայմանների ստեղծման հնարավոր չէ պահել գյուղը: Բնակիչների կենսապայմանները բավարարելու համար ԹԲՀ համագործակցելով ԼՂՀ կառավարության հետ, մի շարք գյուղերում կառուցել է խմելու ջրագծեր՝ գյուղացիներին ապահովելով մշտական ջրով: Հիմնադրամի ֆինանսավորմամբ վերանորոգվել է Քաշաթաղի շրջանի Քարեգահ և Այգեհովիտ գյուղերի գյուղամիջյան ճանապարհը:[4]

Սիրիայում ընթացող պատերազմի հետևանքով մեծ կորուստներ կրեցին մեր հայրենակիցները, որոնցից շատերը ստիպված էին հեռանալ երկրից՝ ապաստան փնտրելով մայր հայրենիքում: Սիրիահայ մի քանի ընտանիք հաստատվեց Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքում: 2011թ. հիմնադրամը ԼՂՀ Կառավարության հետ համատեղ վերանորոգեց Կովսականի բազմաբնակարան մի շենք և 7բնակարան տրամադրեց Սիրիայից տեղափոխված մեր հայրենակիցներին:[5] ԹԲՀ-ը սիրիահայերի համար շահագործման է հանձնել մի քանի տներ Գետամեջ և Վան գյուղերում, վերանորոգել է Իշխանաձոր գյուղում հաստատված սիրիահայ և լիբանանահայ ընտանիքների բնակարանները: Բերձորում, Իշխանաձորում և Կովսականում հաստատված հողագործ սիրիահայերին Արցախի Կառավարության կողմից տրամադրվում են վարկեր:

---

[1] Վարդանյան Ա., «***Թուֆենկյան***» բարեգործական հիմնադրամի (ԹԲՀ) գործունեությունը Արցախում, «***Պատմություն և մշակույթ***» հայագիտական հանդես Բ., (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2013, էջ 78:

[2] «***Ազատ Արցախ***», 4 հոկտեմբերի 2018:

[3] «***Մերան***» ԼՂՀ Քաշաթաղի շրջանային թերթ, թիվ 20 (141), հոկտեմբեր, 2015:

[4] ԼՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-11, պ.մ. 50, թ.12, 51:

[5] Վարդանյան Ա., նշված հոդվածը, էջ 78:

Հիմնադրամն աշխատանքներ է տանում վերաբնակեցված գյուղերի ամրապնդման և զարգացման ուղղությամբ: Նրա կողմից իրականացվում է խաղողի այգիների վերականգնման ծրագիր Հարավային Քաշաթաղի Այգեհովիտ և ՈՒռեկան գյուղերում: Այգիները վերականգնելուց և ծախսերը փակելուց հետո, ըստ կազմած պայմանագրի, դրանք վերադարձվելու են համայնքի անդամներին: Այգիներում աշխատող գյուղացիները ստանում են աշխատավարձ: Հիմնադրամի միջոցներով Այգեհովիտ գյուղում կառուցվել է ալրաղաց, որը սպասարկում է շրջակա մոտ 20գյուղերի բնակիչների:[1] Հարավային Քաշաթաղում շարունակվում են 2005 ու 2007թթ. սկիզբ առած «Ալրաղաց» և «Տեխնիկական բազա» գյուղատնտեսական ծրագրերը, որոնք խթան են հանդիսացել հացահատիկային արտադրության բնագավառի զարգացման համար:[2]

Հադրութի շրջանի Առաջամուղ գյուղի վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու նպատակով ԹԲՀ 2005թ. ստեղծել է 5հա. նռան այգի: 2018թ. այգիներից ստացվել է 18 տոննա նուռ:[3] Քաշաթաղի շրջանի Երիցվանք գյուղի վերաբնակիչների համար 2013թ. հիմնվել է 7հա. նռան այգի, կառուցվել է երկու ջերմոցային տնտեսություն՝ յուրաքանչյուրը 240քառ.մ. մակերեսով:[4] Նույն շրջանի Վան գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն է: Մեծ մասը զբաղվում է ձմերուկի մշակությամբ: ԹԲՀ-ի միջոցներով համայնքում 2018թ. գարնանը հիմնվել է 5հա. արքայանարնջի այգի, տնկվել շուրջ 2500 տնկի:[5] Շրջանի Մոշաթաղ և հարևան Ծիծեռնակավանք գյուղական համայնքի Տանձուտ գյուղերում չորս բազմազավակ ընտանիքի հատկացվել է ընդհանուր 18 մեղվաընտանիք:[6] Հինադրամը վերաբնակիչներին տրամադրում է նաև ցածր տոկոսադրույքով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարները ետ ստանալով՝ օգտագործվում են հետագա ծրագրերի ընդլայնման համար:

Քաշաթաղի շրջանում հիմնադրամն իրականացնում է առողջապահական ծրագրեր: 2005թ. Իշխանաձոր գյուղում կառուցել է բժշկական համալիր, որը կարող է սպասարկել 2000 բնակչի[7] և շարունակում է իր գործունեությունը հիմնադրամի և Արցախի առողջապահության նախարարության աջակցությամբ: Բուժհամալիրը կահավորված է, ունի իր բաժանմունքները՝ ատամնաբուժական, մանկաբարձական, բուժքույրական անձնակազմով, «շտապ օգնություն» մեքենայով: Հիմնադրամի նախաձեռնությամբ բուժհամալիրի աշխատակիցները դասընթացների են մասնակցել Ստեփանակերտի ծննդատանը և ախտորոշիչ կենտրոնում:[8] 2009թ. Քաշաթաղի հյուսիսային և հարավային բուժկետերին, հիվանդանոցներին, առողջապահության նախարարությունը ԹԲՀ-ի կողմից տրամադրվել են «Վարդանանց ասպետներ» և IMEC կազմակերպություններից ստացված բժշկական պարագաներ, սարքավորումներ, կահույք: Նույն թվականին հիմնադրամի հովանավորությամբ բուժկետ բացվեց Հյուսիսային Քաշաթաղի

---

[1] «***Ազատ Արցախ***», 5 հուլիսի, 2005:
[2] «***Հայկական Սփյուռք***». տարեգիրք 2009, էջ 135:
[3] Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «***Թուֆենկյան***» հիմնադրամի գրասենյակը:
[4] «***Մերան***», թիվ 14 (135), հուլիս, 2015:
[5] «***Ազատ Արցախ***», 6 հոկտեմբերի 2018:
[6] «***Ազատ Արցախ***», 8 օգոստոսի 2018:
[7] ԷՂՀ պետական արխիվ, ֆ. 180, ց.1, կ-11, պ.մ. 50, թ. 37, 71:
[8] Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 96:

Մշենի գյուղում:[1] Հիմնադրամի կողմից կառուցվել է Աղավնատուն համայնքի, հիմնանորոգվել և կահավորվել է Մոշաթաղի բուժկետերը:

2015 թվականին հիմնադրամի մասկացությամբ Քաշաթաղի շրջանում իրականացված բարեգործություններից է Աղավնատուն համայնքի Խաչգետիկ գյուղում կառուցված բուժկետը: Այս կարևոր կառույցն իրականություն դարձավ «Թուֆենկյան» հիմնադրամի, Երևանում գործող «One Armenia» կազմակերպության և Լոնդոնում գործող «Հայկական կենտրոն տրեստ» (Armenian centre trust) կառույցի միջոցով:[2]

ԼՂՀ առողջապահության նախարարության հետ համագործակցելով՝ ԹԲՀ-ն կազմակերպել է շարժական կլինիկայի ուղևորություններ Քաշաթաղի հարավային բոլոր գյուղերը, անցկացրել հետազոտություններ: Անվճար տրվել է դեղորայք: Ծրագիրը շարունակվել է ավելի ընդլայնված՝ ընդգրկելով ամբողջ Քաշաթաղը: Առողջապահության նախարարությունը տրամադրել է **դիագնոստիկայի** բեռնատար:[3] Կազմակերպվել են նաև «Birthlink» մանկաբարձների որակավորման դասընթացներ Քաշաթաղի շրջանի բոլոր համայնքների բուժքույրերի համար:

ԹԲՀ-ն կազմակերպել է շարժական կլինիկայի ուղևորություններ նաև Շահումյանի շրջանում: 2010թ. սեպտեմբերին Քարվաճառ են այցելել տարբեր բժշկական մասնագետներից կազմված խմբեր, որոնք իրենց հետ բերել էին համապատասխան բժշկական սարքավորումներ: Տեղի բնակչությունն ունի նմանատիպ միջոցառումների կարիք և նրանք գոհ են, որ կարողանում են հետազոտում շրջանում և ստիպված չեն լինում բժշկական հետազոտման և ախտորոշում ստանալու համար մեկնել Ստեփանակերտ, Մարտակերտ կամ ՀՀ Վարդենիս քաղաք: Այս ծրագրերը որոշակիորեն թեթևացնում են բնակիչների այդ հոգսերը:[4]

«Թուֆենկյան» հիմնադրամի Արցախի գրասենյակի միջոցով իրագործվում են նաև կրթամշակութային ծրագրեր: Հադրութի շրջանի Առաջամուղ գյուղում 2007թ. ամռանը շահագործման հանձնվեց 80 տեղանոց նորակառույց դպրոցը, որի շինարարության և կահավորման ծախսերը հոգացել են «Թուֆենկյան» և Հայ կրթական հիմնադրամները:[5] 2017-ին հիմնադրամի կողմից ընդլայնվել է գյուղի դպրոցի շենքը՝ ավելացել են չորս նոր դասասենյակներ: Հիմնադրամի ֆինանսավորմամբ նորոգվել է Քաշաթաղի շրջանի Աղավնատուն համայնքի դպրոցի շենքը, վերանորոգվել Հոչանց և Գետափ գյուղի դպրոցները: Հակ գյուղի դպրոցը վերանորոգվել է ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ:

ԹԲՀ-ի կողմից Քաշաթաղի շրջանի բոլոր գյուղերում երկու փուլով անց են կացվել համակարգչային դասընթացներ ուսուցիչների, աշակերտների և գյուղի երիտասարդության համար:

---

[1] «***Հայկական Սփյուռք***». տարեգիրք 2009, էջ 135:
[2] «***Մերան***», թիվ 20 (141), հոկտեմբեր 2015:
[3] «***Հայկական Սփյուռք***». տարեգիրք 2010, Երևան, 2011, էջ 124:
[4] «***Նոր Շահումյան***», ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի պաշտոնաթերթ, թիվ 17 (88) 1-15 սեպտեմբեր, 2010:
[5] «***Լուսարար***» ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնաթերթ, 16 օգոստոսի, 2007:

Շահումյանի շրջանի համայնքներում համակարգչային գրագիտությունը զարգացնելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը, նվիրելով վեց նոութբուք և ինը համակարգչային բլոկ, երկու տարի շարունակ ֆինանսավորել է դասընթացները:[1]

Հաշվի առնելով երեխաների նախադպրոցական կրթության կարևորությունը ԹԲՀ-ն մեծ ուշադրություն է դարձնում մանկապարտեզների շինարարությանը: 2014-ի սեպտեմբերին ավարտին հասցվեց Քաշաթաղի շրջանի հյուսիսային թևի ամենամեծ համայնքներից մեկի՝ Մոշաթաղի 25 երեխաների համար նախատեսված մանկապարտեզի կապիտալ վերանորոգումը:[2] Մանկապարտեզների և դպրոցների կառուցումը, վերանորոգումը նպաստում է երեխաների կրթությանն ու հայեցի դաստիարակությանը, տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը:

Հիմնադրամը մեծ ուշադրություն է դարձնում Քաշաթաղի շրջանի հայկական հուշարձանների պահպանմանը: Նրա ֆինանսական աջակցությամբ 2009թ. վերանորոգվել է 17-րդ դարի Սբ.Մինաս եկեղեցին Հակ գյուղում, 2010-ին՝ 17-րդ դարի Միրիկ գյուղի եկեղեցու տանիքը:[3]

Բարձր գնահատելով «Թուֆենկյան» հիմնադրամի բազմաբնույթ գործունեությունը Քաշաթաղի շրջանում, ինչպես նաև զանազան կազմակերպությունների և հիմնադրամների ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը՝ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը նշել է. «Հավատացած եմ, որ համատեղ ուժերով մենք կշենացնենք Արցախի այս գողտրիկ հատվածը, որն ունի համահայկական նշանակություն: Առանց Քաշաթաղի շրջանի՝ հնարավոր չէ Լեռնային Ղարաբաղի՝ որպես անկախ պետության լիարժեք զարգացումը և անվտանգ գոյատևումը: Սա պետք է հիշենք բոլորս և սրանով առաջնորդվենք մեր բոլոր ձեռնարկումներում»:[4]

Այսօր էլ «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը շարունակում է հայրենանվեր գործունեությունը՝ նպաստելով Արցախի Հանրապետության ազատագրված տարածքների զարգացմանը սոցիալ-տնտեսական, կրթական, մշակութային և այլ բնագավառներում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր Վ.Ռ.Բալայանը:

---

[1] «*Նոր Շահումյան*», թիվ 6 (149), 16-31 մարտի 2013:
[2] «*Մերան*», թիվ 8 (105), ապրիլ 2014:
[3] «*Հայկական Սփյուռք*». տարեգիրք 2010, էջ 125:
[4] «*Ազատ Արցախ*», 29 մարտի 2008: